

**«ԲԱՐՁՐԱՎՈՒՄ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՎԱՆԱՁՈՐ-2», «ԱԼԱՎԵՐԴԻ-2» ԵՎ «ԿԱՄՈ» 220 կՎ
ԵՆԹԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԹՎԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԵՎ
ԱՐԴԻՎԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԲԷՑ-ԲՄԾՁԲ-21/47»**

ք. Երևան

«04» *Հոկտեմբերի* 2021թ.

«Բարձրավույտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Հայկ Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Երէներգո» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս տնօրեն Տիգրան Պողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Վանաձոր-2», «Ալավերդի-2» և «Կամո» 220 կՎ ենթակայանների թվային կառավարման համակարգի փոխարինման և արդիականացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,
բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի

կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված Ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է 339 446 400 (երեք հարյուր երեսունինը միլիոն չորս հարյուր քառասունվեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 67 889 280 (վաթսույոթ միլիոն ութ հարյուր ութսունինը հազար երկու հարյուր ութսուն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ դրա չափով բանկային երաշխիք

ներկայացնելու դեպքում: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հաստատման օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Ծառայությունը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այն չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով և սույն Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում և (կամ) այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ

Հ/Հ 1150001172630300

ՀՎՀՀ 01522459

Գլխավոր տնօրեն



/ստորագրություն/

ԿՏ

Հ. Հարությունյան

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Երէներգո» ՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան, Թումանյան 11
«ԱԿԲԱ բանկ» ԲԲԸ, ք. Երևան, 0002,
Արամի 82-84

Հ/Հ 220573331281000

ՀՎՀՀ 02524317

Գլխավոր տնօրեն



Տ. Պողոսյան

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
 «Վանաձոր-2», «Ալավերդի-2» և «Կամո» 220 կՎ ենթակայանների թվային կառավարման
 համակարգի փոխարինման և արդիականացման ծառայություն

ՀՀ դրամ

Ծառայության								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	Ժամկետը
1	72221130/1	«Ալավերդի-2» 220կՎ ենթակայանի թվային կառավարման համակարգի փոխարինում և արդիականացում	Կից ԹԿՀ տեխնիկական բնութագիր	դրամ	107 949 600	1	«Ալավերդի-2» ե/կ, ՀՀ Լոռու մարզ, գ. Ակներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 180 օրացույցային և օրվա ընթացքում
2	72221130/2	«Վանաձոր-2» 220կՎ ենթակայանի թվային կառավարման համակարգի փոխարինում և արդիականացում	Կից ԹԿՀ տեխնիկական բնութագիր	դրամ	131 948 400	1	«Վանաձոր-2» ե/կ, ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Թևոսյան 2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 180 օրացույցային և օրվա ընթացքում
3	72221130/3	«Կամո» 220կՎ ենթակայանի թվային կառավարման համակարգի փոխարինում և արդիականացում	Կից ԹԿՀ տեխնիկական բնութագիր	դրամ	99 548 400	1	«Կամո» ե/կ, ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ Սայադյան 113	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 180 օրացույցային և օրվա ընթացքում

*Տեղափոխման, բեռնաթափման աշխատանքները իրականացվում են Կապարոդի կողմից:

*մատակարարված ապրանքները պետք է լինեն նոր (արտադրությունը 2021թ.) և որակյալ:

*Մասնակիցը, պետք է ներկայացնի ներկայացվող ապրանքի, մատակարարողի, արտադրման վայրի վերաբերյալ փողեկավորություն:

***Վճարումը իրականացվելու է հանձնման – ընդունման արձանագրության հաստատման օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում հանձնման-ընդունման արձանագրությունը կարող է ներկայացվել պարզիրավունքի յուրաքանչյուր չափաբաժնով նախատեսված ծառայությունը ամբողջությամբ մատուցված լինելուց հետո:**

***Կապարոդը հանձնման ընդունման արձանագրության հետ կներկայացնի նաև պայմանագրի շրջանակներում փեղադրված համակարգիչների, սվիչների և կոնտրոլերների գնային բացվածքը յուրաքանչյուր չափաբաժնի համար, որը և հիմք կհանդիսանա Ընկերության հաշվեկշռում վերը նշված հիմնական միջոցները համապատասխան գներով մուտքագրելու և ճանաչելու համար:**

«Ալավերդի-2» 220 կՎ ենթակայանի թվային կառավարման համակարգի փոխարինման և արդիականացման ծառայություն

1. Հիմնական պահանջներ

Սույն պահանջներում նկարագրված Թվային Կառավարման Համակարգը (ԹԿՀ) անհրաժեշտ է մատակարարել և տեղադրել 220 կՎ «Ալավերդի-2» ենթակայանում:

2. Համակարգի հիմնական պահանջներ

ԹԿՀ պետք է ներառի ենթակայանի անվտանգ և հուսալի աշխատանքի համար անհրաժեշտ ղեկավարման, հսկման և կապի բոլոր գործառույթները, որոնք առկա են գործող համակարգում (առաջնային սարքավորումների դիրքերը, ուղեկապման համակարգը, ՕԳ-երի միացման բոլոր անհրաժեշտ պայմանները, ՌՊԱ սարքավորումներից ինֆորմացիայի արտացոլում աշխատանքային համակարգիչներում և տեղափոխում «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերություն): Այն պետք է հնարավորություն ընձեռնի կառավարել ենթակայանը հերթապահ-օպերատորի աշխատանքային կայանի միջոցով: Որի իրականացման համար նախատեսված HMI և կառավարման ծրագրային ապահովումը ներառում է SCADA գործառույթները: Բոլոր ծրագրերի համար անհրաժեշտ է նախատեսել առանց սահմանափակումների լիցենզիաներ: Համակարգը կառուցված պետք է լինի, համակարգի սերվերներից, կապի gateway-ներից, station-bus, intelligent electronic devices (IED) միացությունների կառավարման համար:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սույն պահանջներում չհիշատակված բոլոր սարքերը և աշխատանքները, որոնք անհրաժեշտ են ԹԿՀ հուսալի աշխատանքի համար, պետք է մատակարարել/ իրականացնել:

Հիմնական գործառույթները

Տեխնոլոգիական գործառույթներն են

- Ընթացիկ տեխնոլոգիական պրոցեսների և սարքավորումների տեխնիկական վիճակի վերաբերյալ անալոգային և դիսկրետ տեղեկատվության հավաքագրում, չափում և փոխակերպում
- Ընթացիկ և արխիվային տեղեկատվության ներկայացում ենթակայանի օպերատիվ անձնակազմին և այլ օգտվողներին (սարքավորումների կառավարում և դիտարկում): Մտեմոսխեմաների միջոցով տեխնոլոգիական անալոգային պարամետրերի և սարքավորումների դիրքերի արտապատկերում:
- Տեխնոլոգիական նախազգուշացնող և վթարային ազդանշանավորում, վթարային և նախազգուշացնող ազդանշանների կառավարում և գրանցում, դրանց արտապատկերում և մշակում հերթապահի աշխատանքային կայանի վրա:
- Ենթակայանի սարքավորումների ավտոմատացված կառավարում (այդ թվում հեռավար) ենթակայանի կոմուտացիոն սարքերի, ԲԼԿ-ների կառավարում, տեխնոլոգիական սարքավորումների կառավարում
- Կոմուտացիոն սարքերի կառավարման ծրագրային ուղեկապում

- Ենթակայանում առկա ավտոմատացման և կառավարման ինքնավար համակարգերի հետ տեղեկատվական փոխգործակցություն ստանդարտ պրոտոկոլների միջոցով: ՌՊԱ համակարգի օպերատիվ և ծրագրային դրվածքների հեռավար փոփոխում՝ դրվածքների խմբերի փոփոխություն, գործողության մեջ դնում և հանում, դրվածքներում առանձին գործառույթների գործարկում
- Տեղային ավտոմատ համակարգերի հեռավար կառավարում և վիճակի հսկում
- Վթարային իրադարձությունների գրանցում ՌՊԱ սարքավորումների հետ փոխգործակցմամբ
- Օպերատիվ տեղեկատվության փոխանցում կենտրոնական կառավարման կենտրոնին:
- Կոմուտացիոն սարքերի ռեսուրսի հաշվառում:

Վահան	P139	P634	BM9200/ 9100	P430	P441	P442	P432	P435	P120	P143	P741	P742	P923
«Ալավերդի-2» 220 կՎ ենթակայան													
D01 -Ալավերդի220 կՎ	0	0	1	0	0	1	1	0	0	2	0	0	0
D04 - Լոռի220 կՎ	0	0	1	0	0	1	1	0	0	2	0	0	0
D02+R1 -US-1հիմնական220 կՎ	0	1	1	0	0	0	0	0	0	0	0	0	0
D02+R2 - US-1պահուստ 220 /110/35կՎ	1	0	0	0	0	0	2	0	1	0	0	0	0
D03+R1 - US-2հիմնական220 կՎ	0	1	1	0	0	0	0	0	0	0	0	0	0
D03+R2 - US-2պահուստ 220 /110/35 կՎ	1	0	0	0	0	0	2	0	1	0	0	0	0
E001+R1 ՀԴՊ/ ԱՀՊՍ 110կՎ	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	4	0
E00+R2 ԱԽՊՍ110կՎ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	6	0
E014/11/E07 ՄՀԱ / ԼՏ110 կՎ	0	0	1	0	0	0	2	1	0	0	0	0	0
E08/E10Վահագնի 1,2 110 կՎ	0	0	1	0	2	0	2	0	0	0	0	0	0
E05/E06Թումանյան 1,2110 կՎ	2	0	1	0	0	0	0	2	0	0	0	0	0
E02/E03Լավար /Լոյեմբերյան110 կՎ	1	0	1	0	0	0	1	2	0	0	0	0	0
Y00 + R2 Ընդհանուր ենթակայանային վահան	0	0	1	0	0	0	0	0	0	0	0	0	1
Y00 + R2Սարքավորումներ 35 կՎ	0	0	2	0	0	0	0	0	0	0	0	0	0
H01- US-235 կՎ	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
H02- Դեբեդ,35 կՎ	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
H03- Սանահինքարշային35 կՎ	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
H04- ՍԿՏ-235 կՎ	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
H06- ՄՀԱ35 կՎ	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
H07- Կարիֆարրիկա35 կՎ	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0

H08- ՍԿՏ-135 կՎ	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
H09- ՍՏ-135 կՎ	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
H10- Պահուստ35 կՎ	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0

Ընդհանուր համակարգային գործառույթներ

- Ներհամակարգային և միջհամակարգային կոմունիկացիայի իրականացում, տեղեկատվության մշակում և փոխանցում վերին մակարդակ
- Ծրագրերի, սարքավորումների և ցանցային մասի փորձարկում և ինքնավար ախտորոշում
- ԹԿՀ բոլոր մասերի և թվցային ենթահամակարգերի ժամանակի սինքրոնացում
- Տեղեկատվության արխիվացում և պահպանում տրված ֆորմատով և ժամանակային հատվածում
- Ոչ լիազորված մուտքից պաշտպանում, տեղեկատվական անվտանգություն
- Անտիվիրուսային պաշտպանություն ծրագրային ապահովման համար
- SCL-ի կիրառմամբ ավտոմատ կարգաբերում

Այս պահանջների ապահովման համար անհրաժեշտ ԹԿՀ –ի մանրամասն նախագծը պետք է կազմի մասնակիցը և համաձայնեցնի պատվիրատուի հետ:

Նախագծերը պետք է ներկայացվեն էլեկտրոնային և թղթային տարբերակներով:

Ենթակայաններում գործող պաշտպանությունները և սարքավորումները պետք է ինտեգրել նոր ԹԿՀ-ի հետ:

Համակարգի և ծրագրերի լեզուն պետք է լինի ռուսերեն:

Գործող ԹԿՀ բոլոր ազդանշանները պետք է պահպանվեն:

Սարքերի ուղեկապումը պետք է իրականացնել նաև նոր տեղադրվող սարքվածքներում՝ պահպանելով պաշտպանության ռելեներում իրականացված ուղեկապման համակարգը:

Սարքավորումները պետք է արտադրված լինեն 2021թ:

3. Գործող համակարգի նկարագրությունը

4. Ժամանակի սինքրոնայնություն

Համակարգի ժամանակի սինքրոնայնությունը պետք է հիմնվի GPS ազդանշանի վրա, որը ՑԺՊ (ցանցի ժամանակային պրոտոկոլ) սերվերից պետք է բաշխվի բոլոր սարքավորումներին՝ IED-ներին, կայանների միավորներին, օպերատորի աշխատանքային կայանին, մարշրուտիզատորներին և այլն:

5. Համակարգի կոնֆիգուրացիան

ԹԿՀ-ի համար պետք է տարբերակել երկու կոնֆիգուրացիա՝ կայանի միավոր (պահուստային կամ ոչ-պահուստային), ՄՄՀ (մարդ-մեքենա համակարգ) և մարշրուտիզատոր:

5.1 Պահուստային համակարգը

ԹԿՀ պետք է ունենա պահուստային կայանի սարքավորումներ (ԿՄ), որտեղ բոլոր տվյալները միասին են ներկայացված: ԿՄ-ն տվյալների սերվերի դեր է խաղում: Բոլոր IED-ները ցանցում հաղորդակցվում են ԿՄ-ով:

Նորմալ աշխատանքի ռեժիմում մեկ ԿՄ-ն գլխավորն է, իսկ մյուսը՝ ռեզերվայինը: ՄՄՀ և մարշրուտիզատորների միջև հաղորդակցությունը ակտիվ է միայն գլխավոր ԿՄ-ում: ԿՄ ռեզերվային ռեժիմում այդ միացումներն անջատված են: Խնդիրներ առաջանալու դեպքում ռեզերվային ռեժիմը դրանք վերցնում է իր վրա և միանում: Գլխավոր ԿՄ-ն դառնում է ռեզերվային և ապաստիվացնում ՄՄՀ-ի և մարշրուտիզատորների միացումը:

Փոխանջատման հնարավոր պատճառները՝

- Գլխավոր ԿՄ անսարքությունը
- Գլխավոր ԿՄ աշխատանքի դադարեցումը
- Գլխավոր ԿՄ քարտի անսարքությունը
- Ցանցի բացակայությունը
- և այլն:

Գլխավոր ԿՄ-ն իրականացնում է տվյալների մուտքագրումը ՄՄՀ և մարշրուտիզատորներ: Մյուս ուղղությամբ գլխավոր ԿՄ-ն ուղղում է կառավարումը օպերատորի աշխատանքային կայանից կամ կարգաբերման կենտրոնից դեպի համապատասխան IED:

5.2 Մարդ-մեքենա համակարգ

Մարդ-մեքենա համակարգը կամ ՄՄՀ-ն պետք է ունենան պահուստային կոնֆիգուրացիա: Երկու ՄՄՀ-երը միացված են ԿՄ-ին, որը գլխավորն է: Այլ կերպ ասած՝ երկու ՄՄՀ-երը անընդմեջ աշխատանքի մեջ են և միացված են նույն ԿՄ-ին:

Երկու ՄՄՀ-ից մեկը գլխավորն է: Այն վերահսկում է ցուցակները և արխիվները, ինչպես նաև թարմացնում է երկրորդ՝ ՄՄՀ երկրորդական հատվածը: Խնդիրներ առաջանալու դեպքում, երկրորդական հատվածի վրա է ընկնում աշխատանքի ողջ ծավալը: Հենց որ հիմնական գլխավոր հատվածը կրկին ակտիվանում է, երկու ՄՄՀ տվյալների սինքրոնայնությունը այնպես է իրականացվում, որ ցուցակներն ու արխիվները ՄՄՀ երկու հատվածներում էլ կրկին նույնն են:

Յուրաքանչյուր ՄՄՀ բաղկացած է համակարգչից՝ առնվազն 22 դյույմ տրամագծով մեկ հարթ էկրանով:

Յուրաքանչյուր ՄՄՀ պետք է միացված լինի Ethernet ցանցին՝ երկու տարբեր անջատիչներով, որոնցից մեկը պետք է տեղակայված լինի ԹԿՀ արկղում:

5.3 Ոչ-պահուստային համակարգ

Կայանի միավոր

ԹԿՀ-ն պետք է ունենա կայանի սարքավորումներ (ԿՄ), որտեղ բոլոր տվյալները ներկայացված են միասին : ԿՄ-ն տվյալների սերվերի դեր է խաղում: Բոլոր IED-ները ցանցում հաղորդակցվում են ԿՄ-ով:

ԿՄ-ն բաշխում է տվյալները ՄՄՀ-ին և մարշրուտիզատորին: Մյուս կողմից, ԿՄ Օպերատորի կայանից և կարգավարական կենտրոնից ուղարկում է հրահանգները դեպի համապատասխան IED:

ԿՄ-ն միացված է Ethernet ցանցին՝ երկու տարբեր անջատիչներով, որոնք տեղակայված են ԹԿՀ արկղում: Հնարավոր է նաև իրականացնել տրամաբանական ֆունկցիաներ, օր՝ մի քանի բջիջներից տվյալների հավաքումը: Հնարավոր է նաև իրականացնել ավտոմատ հերթականությամբ:

Մարդ-մեքենա համակարգ

ՄՄՀ-ն ղեկավարում է ցուցակներն ու արխիվները: Այն պետք է բաղկացած լինի համակարգչից՝ առնվազն 22 դյույմ տրամագծով հարթ էկրանով:

ՄՄՀ-ն պետք է միացված լինի Ethernet ցանցին՝ երկու տարբեր անջատիչներով, որոնք տեղակայված են ԹԿՀ արկղում:

6. Օպերատորի աշխատանքային կայանը

Օպերատորի աշխատանքային կայանում պետք է հասանելի լինեն հետևյալ պատկերները՝

- Ենթակայանի հիմնական վերահսկողությունը՝ ներառյալ առկա ենթակայանի բջիջները, եթե կիրառելի են
- Յուրաքանչյուր բջջի մանրամասն վերահսկողությունը
- Վթարների գրանցումների ցանկը: Վթարների գրանցումների ցանկի բովանդակությունը չի տպվում ավտոմատ կերպով, օպերատորը հնարավորություն ունի տպել ցանկի պահանջվող մասը՝ ֆիլտրերի միջոցով
- Պաշտպանության ռելեների ցանկը
- Արխիվացված տվյալների դիտարկումը՝ պաշտպանության ռելեների չափումները և գրանցումները
- Համակարգի տարբեր բաղադրիչների գլխավոր պատկերը՝ իրենց վարկանիշով (աշխատանքային կամ ոչ): Համակարգը պետք է վերծանի SNMP հաղորդագրությունները

Ծրագրի ընթացքում կարող է առաջանալ Պատվիրատուին տարբեր պատկերներ ներկայացնելու անհրաժեշտությունը՝ դրանց հաստատման համար:

Օպերատորը հնարավորություն ունի կառավարելու ենթակայանի սարքավորումները, այդ թվում՝ ավտոտրանսֆորմատորների ԲԼԿ սարքերը, ստանալու տազնապի ազդանշանների ցանկը և այլն:

Օպերատորի աշխատանքային կայանը նույնպես ունի արխիվացման հնարավորություն՝

- Չափումներ
 - Պաշտպանության ռելեներից խափանումների գրանցումներ
- Համակարգում կան առնվազն երեք տեսակի օգտագործողներ՝ այցելու, օպերատոր և կառավարիչ
- **Այցելուն** կարող է միայն դիտել համակարգում հասանելի բոլոր պատկերները, սակայն չի կարող տալ հրահանգներ կամ ստանալ տազնապի ազդանշանների ցանկը
 - **Օպերատորը** կարող է դիտել համակարգում հասանելի բոլոր պատկերները և տալ հրահանգներ, ինչպես նաև ստանալ զգուշացման ազդանշանների ցանկը
 - **Կառավարիչը** կարող է դիտել համակարգում հասանելի բոլոր պատկերները, սակայն չի կարող տալ հրահանգներ կամ ստանալ տազնապի ազդանշանների ցանկը: Կառավարիչը կարող է հանգեցնել համակարգում փոփոխությունների:

Միայն օպերատորն ու կառավարչը պետք է ունենան գաղտնաբառ՝ իրենց արտոնություններից օգտվելու համար:

Եթե օպերատորի աշխատանքային կայանը ակտիվ չէ մեկ ու կես ժամ շարունակ, ապա համակարգը ավտոմատ կերպով կբլոկավորվի:

7. Հրամանների տրման անվտանգության միջոցառումները

7.1 Ընթացակարգ

Որևէ հրաման տրվում է միայն այն բանից հետո, երբ բոլոր ուղեկապման պայմաններն առկա են:

Բաշխիչ սարքավորումների կառավարումն իրականացվում է երեք փուլով՝

1. Շահագործվող բաշխիչ սարքավորման ընտրություն
2. Կառավարման ուղղության ընտրություն (բացում կամ փակում)
3. Հրամանի հաստատում:

Յուրաքանչյուր հրամանի համար համակարգը պետք է ստուգի, որ հետադարձ կապի ազդանշանը վերադառնում է իր ժամանակին և լիարժեք համապատասխանում է հրամանին:

Հնարավոր կլինի հրամանը կատարել, եթե այլ հրաման տրված չէ:

7.2 Նորմալ և հեռակառավարում

Նորմալ կառավարումը պետք է իրականացվի օպերատորի աշխատանքային կայանի վերահսկողության սրահից, որտեղ ողջ ենթակայանի հսկողությունը երևում է էկրանին:

Հնարավոր կլինի նաև ղեկավարել բաշխիչ սարքավորումը հեռակառավարմամբ: Այն դիտարկվում է որպես ռեգերվային հեռակառավարման տարբերակ՝ օպերատորի աշխատանքային կայանի անհասանելիության դեպքում:

Հրամանները կկատարվեն միայն այն դեպքում, եթե ուղեկապման պայմանները կատարված են:

Հենց որ տրվում է հրաման, օպերատորի ուշադրությունը պետք է գրավի «գործընթացը գնում է» ազդանշանը, որը պետք է երևա օպերատորի աշխատանքային կայանում և կառավարման վահանակի վրա:

Յուրաքանչյուր ԲԼԿ-ի կառավարման վահանակի վրա տեղային/հեռակառավարում անջատիչը պետք է թույլ տա կատարել հետևյալ հրամանները՝

- Կամ վահանակի ճակատային մասում՝ տեղային եղանակով,
- Կամ վահանակի վերևի մասում (օպերատորի աշխատանքային կայան կամ կարգավարական կենտրոն)՝ հեռակառավարման եղանակով:

Երկրորդական ռեգերվային վերահսկողություն հնարավոր է իրականացնել ապարիլավորման բանալու կամ գաղտնաբառի միջոցով՝ ԲԼԿ վահանակի ճակատային մասից կամ բազմաֆունկցիոնալ ռելեներից: Այդ դեպքում օպերատորը պետք է կարողանա ղեկավարել առանց բլոկավորման: Այդ հրամանները հնարավոր կլինի իրականացնել բացառապես ԲԼԿ-ից (արգելված է հրամանների ամենաբարձր մակարդակի համար):

IED-ները պետք է ներառեն տրամաբանական ֆունկցիաներ:

Տրամաբանական ֆունկցիաները հնարավորություն են տալիս իրականացնել զուգորդումներ և ավտոմատ հերթականություն: Բոլոր IED սարքավորումների համար պետք է ապահովել 10% պահեստամասեր՝ թվայնացված մուտքերի և ելքերի համար:

8. Մարշրուտիզատոր

Մարշրուտիզատորի միջոցով պետք է իրականացվի տեղեկատվության փոխանցումը դեպի հեռակառավարման կենտրոն (ՀՀԿ): Հաղորդակցության պրոտոկոլը պետք է լինի ըստ IEC 60870-5-101 ստանդարտի, որը պետք է սահմանվի ճարտարագիտական փուլում:

Օպերատորական աշխատանքային կայանում տեղային/հեռակառավարման ծրագրային բանալին պետք է լինի ըստ յուրաքանչյուր բջջի, որը հնարավորություն է ընձեռում հրամանն ուղարկել օպերատորի աշխատանքային կայանից, եթե այն տեղային ռեժիմում է, իսկ հեռակառավարման դեպքում՝ կարգավարական կենտրոնից:

Կարգավարական կենտրոն ուղարկվող ինֆորմացիան պետք է լինի՝

- Եզակի զգուշացման (արժեքների կամ դրանց համալիր արժեքների փոխանցում)
- Կրկնակի զգուշացման
- Տրանսֆորմատորի անցապնային դիրքեր
- Կրկնակի հրահանգ
- Չափումներ:

Մարշրուտիզատորը պետք է միացված լինի Ethernet ցանցին երկու տարբեր անջատիչներով՝ կախված ԹԿԿ կոնֆիգուրացիայից, որը պետք է տեղակայվի՝

- Յուրաքանչյուրը առանձին ԹԿԿ խցում՝ պահուստային համակարգի առկայության դեպքում,
- Նույն ԹԿԿ խցում՝ ոչ պահուստային համակարգի դեպքում:

9. Իրականացում

Համակարգիչների և դրանց կցված սարքերի մեկնարկը չպետք է գերազանցի երկու ռոպե ժամանակահատվածը:

Համակարգչի ծանրաբեռնվածությունը չպետք է գերազանցի 60 %-ը:

Համակարգիչը պետք է ունենա բավարար հիշողություն:

Ենթակայանում բաշխիչ սարքավորման փոխարինման ընթացքում, պատկերները պետք է թարմացվեն ոչ ավել, քան երկու վայրկյանի ընթացքում:

Երկու վայրկյանից ավել չպետք է տևի նոր պատկերի ցուցադրումը:

10. Ճարտարագիտական կոնֆիգուրացիայի աշխատանքային կայանը

Պետք է նախատեսվի առանձին ճարտարագիտական աշխատանքային կայան (նոութբուք):

Այդ ճարտարագիտական աշխատանքային կայանը պետք է ունենա հետևյալ հնարավորությունները՝

- Բոլոր պատկերների արտացոլումը
- Տեխնիկական սպասարկման ֆունկցիաներ՝
 - Համակարգի սխալների և պատահարների վիզուալիզացիա
 - Կոնֆիգուրացիաների ներբեռնում
 - Համակարգում տեղադրված սարքավորումների և ծրագրային ապահովման տարբերակների ընթերցում
- Մշակման ֆունկցիաները՝
 - Համակարգի փոփոխություններ,
 - Սարքավորման կոնֆիգուրացիան,
 - Համակարգի կոնֆիգուրացիաների ներբեռնում:

Ճարտարագիտական կոնֆիգուրացիայի աշխատանքային կայանը հազեցած է բոլոր անհրաժեշտ կոնֆիգուրացիոն լիցենզիաներով:

Բոլոր ծրագրային լիցենզիաները պետք է լինեն առանց ժամանակային սահմանափակման և հնարավորություն ունենան տեղադրվելու ցանկացած համակարգչի կամ սարքավորման վրա:

11. Փոփոխական հոսանքի սնուցման սարքեր

Անհրաժեշտ է նախատեսել փոփոխական հոսանքի երկու փոխակերպիչ, ԹԿ սարքերի անխափան սնուցումը ապահովելու համար: Առաջարկվող փոխակերպիչների տեսակները պետք է ներկայացվեն պատվիրատուին հաստատման:

12. Ուսուցում

Պետք է ԲԷՑ ՓԲԸ անձնակազմի ուսուցում (յուրաքանչյուր ենթակայանում 10 հոգի) ուսուցումը՝ մոնտաժված ԹԿ շահագործման և գործառույթների համար:

Անհրաժեշտության դեպքում պետք է ներկայացնել Պատվիրատուին ուսուցման ծրագիրը և նշի տևողությունը:

13. Վերահսկողություն և փորձարկումներ

Փորձարկումները պետք է իրականացվեն IEC ստանդարտներին համապատասխան:

14. Սխեմաներ և փաստաթղթեր

Ստորև ներակայացված են արտադրողի կողմից նախապատրաստվող փաստաթղթերը (ոչ ամբողջական ցանկը)՝

14.1 Պետք է ներկայացվեն մրցույթին

- ԹԿ տարրերի կատալոգները և բրոշյուրները
- ԹԿ ժամանակավոր ճարտարապետական լուծումները
- Առաջարկվող սարքավորումների ցանկը՝ իրենց առանձնահատուկ ֆունկցիաներով

14.2 Պայմանագրի իրականացման ընթացքում

- ԹԿ մանրամասն ճարտարապետական լուծումները
- ԹԿ տվյալների ցանկը (մուտքեր, ելքեր, ազդանշաններ, վթարներ և այլն)
- Բլոկավորման գրառումների նկարագրությունը
- Իրականացվող տրամաբանական քայլերի գրառումների նկարագրությունը
- Բոլոր SS և թվայնացված սարքավորումների կոնֆիգուրացիան;

- ԹԿՀ մաս կազմող սարքավորումների յուրաքանչյուր սարքի մոնտաժման և շահագործման ցուցումների նկարագրությունը
- Սարքավորումների վերջնական ցանկը
- ԳԸՓ և ՏԸՓ ֆունկցիոնալ փորձարկումների հաշվետվությունը:

14.3 Սխեմաներ

Պետք է նախապատրաստել հետևյալ սխեմաները՝

- ԹԿՀ մանրամասն սխեմաներ
- Օպտիկամանրաթելային մալուխների ցանցի մանրամասն սխեմա:

15. Աքսեսուարները և պահեստամասերը

Բոլոր սարքավորումների և կատարված աշխատանքներին անհրաժեշտ է տրամադրել երաշխիք 2 տարի ժամկետով:

«Վանաձոր-2» 220 կՎ ենթակայանի թվային կառավարման համակարգի փոխարինման և արդիականացման ծառայություն

16. Հիմնական պահանջներ

Սույն պահանջներում նկարագրված Թվային կառավարման Համակարգը(ԹԿՀ) անհրաժեշտ է մատակարարել և տեղադրել 220 կՎ «Վանաձոր-2» ենթակայանում:

17. Համակարգի հիմնական պահանջներ

ԹԿՀ պետք է ներառի ենթակայանի անվտանգ և հուսալի աշխատանքի համար անհրաժեշտ ղեկավարման, հսկման և կապի բոլոր գործառույթները, որոնք առկա են գործող համակարգում (առաջնային սարքավորումների դիրքերը, ուղեկապման համակարգը, ՕԳ-երի միացման բոլոր անհրաժեշտ պայմանները, ՌՊԱ սարքավորումներից ինֆորմացիայի արտացոլում աշխատանքային համակարգիչներում և տեղափոխում «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերություն) : Այն պետք է հնարավորություն ընձեռնի կառավարել ենթակայանը հերթապահ-օպերատորի աշխատանքային կայանի միջոցով: Որի իրականացման համար նախատեսված HMI և կառավարման ծրագրային ապահովումը ներառում է SCADA գործառույթները: Բոլոր ծրագրերի համար անհրաժեշտ է նախատեսել առանց սահմանափակումների լիցենզիաներ: Համակարգը կառուցված պետք է լինի, համակարգի սերվերներից, կապի gateway-ներից, station-bus, intelligent electronic devices (IED) միացությունների կառավարման համար:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սույն պահանջներում չհիշատակված բոլոր սարքերը և աշխատանքները, որոնք անհրաժեշտ են ԹԿՀ հուսալի աշխատանքի համար, պետք է մատակարարել/ իրականացնել:

Հիմնական գործառույթները

Տեխնոլոգիական գործառույթներն են

- Ընթացիկ տեխնոլոգիական պրոցեսների և սարքավորումների տեխնիկական վիճակի վերաբերյալ անալոգային և դիսկրետ տեղեկատվության հավաքագրում, չափում և փոխակերպում
- Ընթացիկ և արխիվային տեղեկատվության ներկայացում ենթակայանի օպերատիվ անձնակազմին և այլ օգտվողներին(սարքավորումների կառավարում և դիտարկում): Մենուսխեմաների միջոցով տեխնոլոգիական անալոգային պարամետրերի և սարքավորումների դիրքերի արտապատկերում:
- Տեխնոլոգիական նախազգուշացնող և վթարային ազդանշանավորում, վթարային և նախազգուշացնող ազդանշանների կառավարում և գրանցում, դրանց արտապատկերում և մշակում հերթապահի աշխատանքային կայանի վրա:
- Ենթակայանի սարքավորումների ավտոմատացված կառավարում(այդ թվում հեռավար) ենթակայանի կոմուտացիոն սարքերի, ԲԼԿ-ների կառավարում, տեխնոլոգիական սարքավորումների կառավարում
- Կոմուտացիոն սարքերի կառավարման ծրագրայի ուղեկապում
- Ենթակայանում առկա ավտոմատացման և կառավարման ինքնավար համակարգերի հետ տեղեկատվական փոխգործակցություն ստանդարտ պրոտոկոլների միջոցով: ՌՊԱ համակարգի օպերատիվ և ծրագրային դրվածքների հեռավար փոփոխում՝ դրվածքների խմբերի փոփոխություն, գործողության մեջ դնում և հանում, դրվածքներում առանձին գործառույթների գործարկում
- Տեղային ավտոմատ համակարգերի հեռավար կառավարում և վիճակի հսկում
- Վթարային իրադարձությունների գրանցում ՌՊԱ սարքավորումների հետ փոխգործակցմամբ
- Օպերատիվ տեղեկատվության փոխանցում կենտրոնական կառավարման կենտրոնին:
- Կոմուտացիոն սարքերի ռեսուրսի հաշվառում:

Ընդհանուր համակարգային գործառույթներ

- Ներհամակարգային և միջհամակարգային կոմունիկացիայի իրականացում, տեղեկատվության մշակում և փոխանցում վերին մակարդակ
- Ծրագրերի, սարքավորումների և ցանցային մասի փորձարկում և ինքնավար ախտորոշում
- ԹԿՀ բոլոր մասերի և թվցային ենթահամակարգերի ժամանակի սինքրոնացում
- Տեղեկատվության արխիվացում և պահպանում տրված ֆորմատով և ժամանակային հատվածում
- Ոչ լիազորված մուտքից պաշտպանում, տեղեկատվական անվտանգություն
- Անտիվիրուսային պաշտպանություն ծրագրային ապահովման համար
- SCL-ի կիրառմամբ ավտոմատ կարգաբերում

Այս պահանջների ապահովման համար անհրաժեշտ ԹԿՀ -ի մանրամասն նախագծը պետք է կազմի մասնակիցը և համաձայնեցնի պատվիրատուի հետ:

Նախագծերը պետք է ներկայացվեն էլեկտրոնային և թղթային տարբերակներով:

Ենթակայաններում գործող պաշտապնությունները և սարքավորումները պետք է ինտեգրել նոր ԹԿՀ-ի հետ:

Համակարգի և ծրագրերի լեզուն պետք է լինի ռուսերեն:

Գործող ԹԿՀ բոլոր ազդանշանները պետք է պահպանվեն:

Սարքերի ուղեկապումը պետք է իրականացնել նաև նոր տեղադրվող սարքվածքներում՝ պահպանելով պաշտպանության ռելեներում իրականացված ուղեկապման համակարգը:

Սարքավորումները պետք է արտադրված լինեն 2021թ:

18. Գործող համակարգի նկարագրությունը

Վահան	P139	P634	BM9200/ 9100	P430	P441	P442	P432	P435	P120	P143	P741	P742	P923
«Վանաձոր-2» 220 կՎ ենթակայան													
D01 - Գյումրի 220 կՎ	0	0	1	0	0	1	1	0	0	0	0	0	0
D02 - Լոռի 220 կՎ	0	0	0	0	0	1	1	0	0	0	0	0	0
D03 - Գուգարք 2 220 կՎ	0	0	1	0	0	1	1	0	0	0	0	0	0
D04 - Գուգարք 1220 կՎ	0	0	0	0	0	1	1	0	0	0	0	0	0
D05 - ԿԱ / D09- ՄՀԱ/ D10-LS -1,2220 կՎ	1	0	1	0	0	0	1	0	0	0	0	0	0
D08 - ԱՏ - 2220 կՎ	0	1	0	0	0	0	1	0	2	0	0	0	0
D11 - ԱՏ -1220 կՎ	0	1	1	0	0	0	1	0	2	0	0	0	0
E03- Պահուստային 110 կՎ	1	0	1	0	1	0	0	0	0	0	0	0	0
E01 - ՋԷԿ-2 /E02 - ՋԷԿ- 1110 կՎ	2	0	1	0	0	0	0	2	0	0	0	0	0
E04-Ստեփանավան/E15- Ֆիդետովո 110 կՎ	2	0	1	0	2	0	0	0	0	0	0	0	0
E05- Վահագնի-1/ E06- Վահագնի -2110 կՎ	0	0	1	0	2	0	2	0	0	0	0	0	0
E07 - ԱՏ-2 110 կՎ----- -----ԱՏ-2 35 կՎ	2	0	1	0	0	0	0	0	0	0	0	0	0
E10-LS -1,2h.h. ԿԼՏ/E12- ՄՀԱ/E13 - ԿԱ110 կՎ	2	0	1	0	1	0	0	0	0	0	0	0	0
E14 - ԱՏ-1 110 կՎ----- -----ԱՏ-1 35 կՎ	2	0	1	0	0	0	0	0	0	0	0	0	0

Վահան	P139	P634	BM9200/ 9100	P430	P441	P442	P432	P435	P120	P143	P741	P742	P923
E16 - Խնձորուտ / E17 - Դիմաց110 կՎ	2	0	1	0	2	0	0	0	0	0	0	0	0
E18 - Առափնյա -1/ E19 - Առափնյա -2 110 կՎ	2	0	1	0	2	0	0	0	0	0	0	0	0
H01- US-2/H02 - ՄՍԱ/H03 -US-1 35 կՎ	3	0	3	0	0	0	0	0	0	0	0	0	0

19. Ժամանակի սինքրոնայնություն

Համակարգի ժամանակի սինքրոնայնությունը պետք է հիմնվի GPS ազդանշանի վրա, որը ՑԺՊ (ցանցի ժամանակային պրոտոկոլ) սերվերից պետք է բաշխվի բոլոր սարքավորումներին՝ IED-ներին, կայանների միավորներին, օպերատորի աշխատանքային կայանին, մարշրուտիզատորներին և այլն:

20. Համակարգի կոնֆիգուրացիան

ԹԿՀ-ի համար պետք է տարբերակել երկու կոնֆիգուրացիա՝ կայանի միավոր (պահուստային կամ ոչ-պահուստային), ՄՄՀ (մարդ-մեքենա համակարգ) և մարշրուտիզատոր:

20.1 Պահուստային համակարգը

ԹԿՀ պետք է ունենա պահուստային կայանի սարքավորումներ (ԿՄ), որտեղ բոլոր տվյալները միասին են ներկայացված: ԿՄ-ն տվյալների սերվերի դեր է խաղում: Բոլոր IED-ները ցանցում հաղորդակցվում են ԿՄ-ով:

Նորմալ աշխատանքի ռեժիմում մեկ ԿՄ-ն գլխավորն է, իսկ մյուսը՝ ռեզերվայինը: ՄՄՀ և մարշրուտիզատորների միջև հաղորդակցությունը ակտիվ է միայն գլխավոր ԿՄ-ում: ԿՄ ռեզերվային ռեժիմում այդ միացումներն անջատված են: Խնդիրներ առաջանալու դեպքում ռեզերվային ռեժիմը դրանք վերցնում է իր վրա և միանում: Գլխավոր ԿՄ-ն դառնում է ռեզերվային և ապակտիվացնում ՄՄՀ-ի և մարշրուտիզատորների միացումը:

Փոխանջատման հնարավոր պատճառները՝

- Գլխավոր ԿՄ անսարքությունը
- Գլխավոր ԿՄ աշխատանքի դադարեցումը
- Գլխավոր ԿՄ քարտի անսարքությունը
- Ցանցի բացակայությունը
- և այլն:

Գլխավոր ԿՄ-ն իրականացնում է տվյալների մուտքագրումը ՄՄՀ և մարշրուտիզատորներ: Մյուս ուղղությամբ գլխավոր ԿՄ-ն ուղղում է կառավարումը օպերատորի աշխատանքային կայանից կամ կարգաբերման կենտրոնից դեպի համապատասխան IED:

20.2 Մարդ-մեքենա համակարգ

Մարդ-մեքենա համակարգը կամ ՄՄՀ-ն պետք է ունենան պահուստային կոնֆիգուրացիա: Երկու ՄՄՀ-երը միացված են ԿՄ-ին, որը գլխավորն է: Այլ կերպ ասած՝ երկու ՄՄՀ-երը անընդմեջ աշխատանքի մեջ են և միացված են նույն ԿՄ-ին:

Երկու ՄՄՀ-ից մեկը գլխավորն է: Այն վերահսկում է ցուցակները և արխիվները, ինչպես նաև թարմացնում է երկրորդ՝ ՄՄՀ երկրորդական հատվածը: Խնդիրներ առաջանալու դեպքում, երկրորդական հատվածի վրա է ընկնում աշխատանքի ողջ ծավալը: Հենց որ հիմնական գլխավոր հատվածը կրկին ակտիվանում է, երկու ՄՄՀ տվյալների սինքրոնայնությունը այնպես է իրականացվում, որ ցուցակներն ու արխիվները ՄՄՀ երկու հատվածներում էլ կրկին նույնն են:

Յուրաքանչյուր ՄՄՀ բաղկացած է համակարգչից՝ առնվազն 22 դյույմ տրամագծով մեկ հարթ էկրանով:

Յուրաքանչյուր ՄՄՀ պետք է միացված լինի Ethernet ցանցին՝ երկու տարբեր անջատիչներով, որոնցից մեկը պետք է տեղակայված լինի ԹԿՀ արկղում:

20.3 Ոչ-պահուստային համակարգ

Կայանի միավոր

ԹԿՀ-ն պետք է ունենա կայանի սարքավորումներ (ԿՄ), որտեղ բոլոր տվյալները ներկայացված են միասին : ԿՄ-ն տվյալների սերվերի դեր է խաղում: Բոլոր IED-ները ցանցում հաղորդակցվում են ԿՄ-ով:

ԿՄ-ն բաշխում է տվյալները ՄՄՀ-ին և մարշրուտիզատորին: Մյուս կողմից, ԿՄ Օպերատորի կայանից և կարգավարական կենտրոնից ուղարկում է հրահանգները դեպի համապատասխան IED:

ԿՄ-ն միացված է Ethernet ցանցին՝ երկու տարբեր անջատիչներով, որոնք տեղակայված են ԹԿՀ արկղում: Հնարավոր է նաև իրականացնել տրամաբանական ֆունկցիաներ, օրինակ՝ մի քանի բջիջներից տվյալների հավաքումը: Հնարավոր է նաև իրականացնել ավտոմատ հերթականությամբ:

